

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք

17/12/2021

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Հրաչիկ Մանուչարյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Զանոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ա. Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մ. Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մուշկամբարյանը

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ՝
ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի՝
համամասնական ընտրակարգով ընտրված նորընտիր ավագանու առաջին
նստաշրջանի առաջին նիստի հետևյալ օր ա կ ա թ գ ը.

1.1 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու
խմբակցությունների ստեղծման մասին

1.2 Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ղեկավար ընտրելու մասին

1.3 Համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին որոշման ընդունում

1.4 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին .

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՇՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 47-Ա որոշումը՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝

1) «ԱԶԱՏԱԿԱՆ»

2) «ՀԱՅՐԵՆԻՔ»

3) «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

4) «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

2. Սահմանել, որ խմբակցությունները Վայք համայնքի ղեկավարին պետք է գրավոր ներկայացնեն իրենց կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք կիրառարակվեն ավագանու առաջիկա նիստում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերի, հիմք ընդունելով Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի թիվ ԺՀ/2 արձանագրությունը՝

1. Ստեղծել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի՝ ավագանու երեք անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով/այսուհետև հանձնաժողով/:
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝
 - 1) Անուշ Արամյան
 - 2) Շուշանիկ Ասլանյան
 - 3) Հասմիկ Հակոբյան

Համայնքի ղեկավարի ընտրության համար կուսակցություններին առաջարկվեց ներկայացնել իրենց համայնքի ղեկավարի թեկնածուի անուն, ազգանունը, կամ թեկնածու չառաջադրելու մասին:

«Ազատական» կուսակցության ներկայացուցիչ Սիմոն Բաբայանը հայտարարեց իրենց կողմից թեկնածու չառաջադրելու մասին, «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչ Աստղիկ Հակոբյանը համայնքի ղեկավարի թեկնածու առաջարկեց Կառլեն Մինասյանին, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչ Հայկ Ավագյանը առաջարկեց Մխիթար Մաթևոսյանի թեկնածությունը: Ընտրության արդյունքներով ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը արձանագրեց հետևյալ արդյունքները

Մխիթար Մաթևոսյան-8 կողմ

Կառլեն Մինասյան-1 կողմ

3. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար ընտրել Մխիթար Կոլյայի Մաթևոսյանին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

/Ձեկ. 9. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

1. Հաստատել համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն կից հավելվածի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. 9. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը՝ 13:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Լսեցին-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

գեկուցող Համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյան










Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Համայնքի ավագանին որոշեց Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը՝ 13:00-ին


Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ 
ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ 
ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ 
ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ 
ԼԵՎՈՆ ԲԱԴԱԼՅԱՆ 
ԱՐՏԱՎԱՋԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ 
ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ 
ԱՍՏԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ 
ՄԻԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ 

Նիստին արձանագրեց՝ Գ. Մուշկամբարյանը

